Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10359

3КСМ2(4)
Z-24

# ՀԼԿՅԵՄ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

3КСМ2(47.925)
Հ-24

ԿՈՒՍՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

10359
01 JUN 2013
24 SEP 2006
1 DEC 2009
3KCM2(47·92S)
Z-24

# ՀԼԿՅԵՄ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

8000
37629

ԿՈՒՍՀՐԱՏ — 1932 — ՅԵՐԵՎԱՆ

ՀՍՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека ССРА им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

## 1.

*Հայաստանի Լենինյան կոմյերիտ միության 8-րդ համագումարը լսելով և քննության առնելով ՀԼԿՅԵՄ 7-րդ համագումարից մինչև 8-րդ համագումար. ՀԼԿՅԵՄ կենտկոմի տարած աշխատանքների հաշվետվությունը, կենտրոնական կոմիտեյի քաղաքական գիծը գտնում է ճիշտ և տարած աշխատանքները բավարար:*

*Համագումարն արձանագրում է, վոր Անդրկովկասյան գյուղացիական և ազգային հերցերում թույլ տրված քաղաքական կոպիտ սխալները վերաբերվել են ամբողջապես նաև Լենինյան կոմյերիտմիությանը:*

*Համագումարը միաժամանակ նշում է, վոր ԿԿ-ի 31 թ. Հոկտ. 31-ի վորոշումների և ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքների հիման վրա, ինչպես Անդրկովկասի կուսակցական, նույնպես և կոմյերիտական կազմակերպությունները ձեռնարկել են վճռական միջոցներ՝ կուս ղեկավարության արմատապես ուղղելու համար թույլ տրված քաղաքական կոպիտ սխալները, այդ ուղղությամբ ձեռք բերելով հսկայական հաջողություններ:*

## 2.

ՀԼԿՑԵՄ 7-րդ համագումարից մինչև 8-րդ համագումարն անցած ժամանակաշրջանը նշանակալից է ԽՍՀՄ-ի պրոլետարիատի ու աշխատավորության պատմական վիթխարագույն հաղթանակներով սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում: Աճել ու ամրացել է խորհուրդների յերկրի ինդուստրիալ հզորությունը: Յերկրում բարձրացել են ինդուստրացման այնպիսի հոյակապ կոթողներ ինչպիսին են Մագնիտոստրոյը, Կուզնեցստրոյը, Դնեպրոստրոյը, և այլն:

Կուսակցության ինդուստրացման քաղաքականության անսայթաք կիրառումը նախապայմաններ ստեղծեց ու ապահովեց մեր հեղափոխության ամենադժվարին և ամենակարևոր հարցի լուծումը՝ գյուղական մանրագույն անհատական տնտեսությունները զարգացման կապիտալիստական ճանապարհից թեքել սոցիալիստական զարգացման ռելսերի վրա: Լայն ծավալ է ստացել սովխոզ և կոլխոզ շինարարությունը: ԽՍՀՄ-ի վողջ աշխատավոր գյուղացիության մոտ 62%-ը արդեն գտնվում է կոլեկտիվ տնտեսությունների մեջ: Այդպիսով գյուղատնտեսության մեջ ևս իշխող դերը պատկանում է սոցիալիստական ձևերին: Համատարած կոլեկտիվացման հիման վրա անշեղորեն և հաջողությամբ շարունակվում է կուլակության վերացումը վորպես դասակարգի:

Այս համաշխարհային պատմական նվաճումներով սոցիալիստական առաջին հնգամյակի 3-րդ վճռական տարում մենք ավարտեցինք սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը, այդպիսով անվերադարձորեն լուծելով լենինյան «ՈՎ—ՈՒՄ»-ի խնդիրը



և՛ արդյունաբերության մեջ և թե՛ գյուղատնտեսության ասպարեզում, ընդդեմ կապիտալիզմի և հոգուտ սոցիալիզմի:

Այս վիթխարի նվաճումները ԽՍՀՄ-ում, վորոնք ծավալվում են կապիտալիստական աշխարհի տնտեսական չտեսնված և հետզհետե խորացող ճգնաժամի ու հեղափոխական վերելքի ֆոնի վրա—բանվոր դասակարգը և վողջ աշխատավորությունը ձեռք բերեցին բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ՝ դասակարգային թշնամու ու մեր շարքերում նրանց ագենտուրայի դեմ յերկու ֆրոնտում մղվող անողոք և անհաշտ պայքարի պայմաններում —աջ թեքման դեմ, վորպես ներկա էտապի գլխավոր վտանգի, «ձախ» խոտորումների, հակահեղափոխական տրոցկիզմի և կուսակցության լենինյան գլխավոր գծից ամեն տեսակի թեքումների դեմ ցուցաբերվող հաշտվողականության: Համագումարը արձանագրում է, վոր այդ բոլոր նվաճումներն ապահովվեցին, շնորհիվ կուսակցության Կենտկոմի բոլշևիկյան սկզբունքային անյերեր քաղաքականության, վորոնք անսայթաք կիրառվում է կուսակցության և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ գլխավորությամբ:

## 3.

Հայաստանի Լենինյան կոմսոմոլը 7-ից մինչև ՀԼԿՑԵՄ 8-րդ համագումարը ձգվող ժամանակաշրջանում, Հայկոմկուսի և Կենտկոմի անմիջական ղեկավարությամբ պայքարել է առաջին սոցիալիստական 5-ամյակը չորս տարում կատարելու համար, այդ հերոսական պայքարում ձեռք բերելով խոշոր նվաճումներ,

Սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում բարձրացել է ՀԼԿՅԵՄ-ի քաղաքական-տնտեսական աշխատանքի կշիռն ու բովանդակությունը: Կոմսոմոլն այժմ ավելի ու խորն է ընդգրկում կուսակցության կողմից իրեն առաջադրվող խնդիրները:

## 4.

## ՊՂՆՁԻ ՇԵՖԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Համագումարն արձանագրում է, որ 7-րդ համագումարում Հայաստանի պղնձարդյունաբերության շեֆությունը վերցնելուց հետո—ՀԼԿՅԵՄ կազմակերպությունները զգալի աշխատանք ծավալեցին պղնձարդյունաբերության պլանների կատարման ուղղությամբ, հանքերին տրամադրելով որոշ քանակությամբ մշտական կոմյերիտական բանվոր, հաճախակի բուքսիրներ ուղարկելով և այլ ձեռնարկումներով. սակայն համագումարն անհրաժեշտ է համարում նշել, որ առանձին կազմակերպությունների կողմից շեֆական աշխատանքների անտեսումը, պղնձի փրոնտում աշխատանքի սոցիալիստական ձևերի անբավարար ծավալումը, պղնձարդյունաբերության տեխնիկական ռեկոնստրուկցիայի. տեխնիկայի տիրապետման և Ստալինի 6 ցուցմունքների կենսագործման համար տարվող դեռևս անբավարար պայքարը, յերկրաբանական-հետախուզական աշխատանքներին չափազանց անբավարար ուշադրություն դարձնելը—պատճառ է հանդիսանում մեր—ծանր ինդուստրիայի համար հսկայական նշանակություն ունեցող պղնձարդյունաբերության պլանների թերակատարմանը:



Համագումարը, որպես առաջիկայի մարտական խնդիր ՀԼԿՅԵՄ բոլոր կազմակերպություններին պարտադրում է ամբողջովին վերջ տալ շեֆական աշխատանքներին ձևական մոտեցմանը՝ ամենակարճ ժամանակամիջոցում պղնձի ֆրոնտը մշտական աշխատանքի ուղարկել որոշված քանակությամբ լավագույն և կայուն կոմյերիտականներ: Անհրաժեշտ է կազմակերպության բոլոր օղակներում—առաջին հերթին Ալլահվերդում և Ղափանի կազմակերպություններում—լայն մասսայականացնել Համ. Կ(բ)Կ. կենտկոմի հոկտեմբերի 31-ի որոշումը, Հ.Կ(բ)Կ. կենտկոմի որոշումը՝ պղնձարդյունաբերության ռեկոնստրուկցիայի մասին և ապահովել կոմյերիտական օգնություն ու կոնտրոլը Ալլահվերդու, Ղափանի պղնձահանքերի վերասարքավորման ու հիմնական վերակառուցման աշխատանքներում: Համագումարը պարտավորեցնում է մանավանդ պղնձի ֆրոնտի կոմսոմոլին, առանձնահատուկ ուշադրություն դարձնել ու ակտիվ մասնակցել պղնձի նոր պաշարներ ու հանքավայրեր հայտնաբերելու համար տարվող յերկրաբանական-հետախուզական աշխատանքներին:

Այս տարի 5000 տոնն պղնձի արտադրությունը պետք է լինի Ալլահվերդու, Ղափանի և վողջ ՀԼԿՅԵՄ կազմակերպությունների պատվի գործը:

## 5.

## ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՑԻԱՅԻ ՖՐՈՆՏՈՒՄ

Ելեկտրոֆիկացիան մեր սոցիալիստական շինարարության տեմպերի արագացման գործում, արտոֆին-

պլանների կատարման գործում վճռական նշանակություն ունի:

ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության աճման տեմպերին չի բավարարում գոյություն ունեցող էլեկտրոէներգիան, վորն արդեն իսկ դառնում ե ժողտնտեսության նեղ տեղերից մեկը: Համագումարը գտնում ե, վոր կոմսոմոլը դեռևս անբավարար ե պայքարում էլեկտրոշինարարության ֆրոնտում և հեռու յե շեֆական պարտավորությունները լրիվ կատարելուց:

Հետագա շրջանում մեզ մոտ էլեկտրոկայանների շինարարության վիթխարի հեռանկարները, մասնավորապես Սևան-Զանգվի պրոբլեմի լուծումից հետո ՀԼԿՅԵՄ-ի առաջ իր ամբողջ սրությամբ դնում ե վճռականորեն բարելավելու շեֆական աշխատանքները, ավելի բարձրացնելով այդ աշխատանքների վորակը:

Համագումարն անհրաժեշտ ե համարում էլեկտրոֆիկացիայի գլխավոր պլանն ամենակարճ ժամանակամիջոցում մասսայականացնել կազմակերպության բոլոր օղակներում և կոմյերիտական խիստ հսկողություն սահմանել գործող էլեկտրոկայանների էներգիայի ռացիոնալ ու խնայողաբար օգտագործման համար:

## 6.

## ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՖՐՈՆՏՈՒՄ

Արձանագրելով տրանսպորտի սոցիալիստական վերակառուցման մեջ կուսակցության ղեկավարությամբ մեր ձեռք բերած վորոշակի նվաճումները միաժամանակ համագումարը նշում ե, վոր տրանսպորտի աշխատանքների ներկա դրվածքը, տրանսֆին-պլանների կատարման տեսակետից՝ դեռևս հեռու յե բավարարելուց ժող. տնտեսության աճող պահանջները:



Համագումարը հատուկ սրությամբ նշում ե կոմյերիտական կազմակերպությունների դեռևս անբավարար աշխատանքը՝ մասնավորապես խճուղային շինարարության, մինչ-շրջանային և մինչ-քաղաքային տրանսպորտի դարգացման ու աշխատանքների ծավալման ուղղությամբ: Համագումարն արձանագրում ե, վոր տրանսպորտի կոմյերիտական կազմակերպությունները դեռևս չեն օգտագործում բոլոր հնարավորությունները, տրանսպորտն իր նեղ տեղից հանելու և այն սոցիալիստական շինարարության թուռն տեմպերի մակարդակը բարձրացնելու համար: Յերկաթուղու և Դեպոյի կոմյերիտական կազմակերպությունները դեռևս վճռականորեն ձեռնամուխ չեն յեղել դեպոներում և յերկաթգծում վերջ տալու համար դիմազրկությանը, վճռական պայքար չեն ծավալել տրանսպորտում բուրժուական կուլակային տրամադրությունների, աջ օպորտունիզմի դեմ. ամեն ինչ չի արված բարձրացնելու համար ռեմոնտի վորակը, 100%-ով և անշեղ կիրառելու զուգերթը, տրանսպորտի աշխատանքներն արմատապես վերակառուցելու համար ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6-մարտական ցուցմունքների և ընկ. ԱՆԴՐԵՅԵՎԻ դիրեկտիվների հիման վրա:

Համագումարը պարտավորեցնում ե կոմյերիտական բոլոր կազմակերպություններին հատուկ ուշադրություն նվիրել 32—33 տարիներում Հայաստանի սահմաններում ծավալվող Յերևան—Աղստաֆա, Ղափան, յերկաթուղային շինարարության պլանների կատարման գործում ամենայն օժանդակություն ապահովելու խնդիրներին

վրա, այդ կառուցումների քաղաքական նշանակությունը հասցնելով յուրաքանչյուր կոմյերիտականի:

### 7.

1932 թ. 100,000,000 ռ. շինարարությունը կոմյերիտական կազմակերպություններից և առաջին հերթին նոր շինարարությունների ֆրոնտում աշխատող կոմսոմոլից պահանջում է լրիվ օգտագործել պլանների կատարման բոլոր հնարավորությունները, խնայողաբար օգտագործել շինանյութերը, տիրապետել շինարարության տեխնիկային, լայնորեն կիրառելով սոց. մրցումն ու հարվածայնությունը և այդ շարժման մեջ ընդգրկելով նորեկ և վողջ բանվորությանը, այդ հիման վրա բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը:

Շինարարության կոմյերիտական կազմակերպությունների անմիջական նախաձեռնությամբ ապահովել նորագույն տեխնիկական ձևերի, մեքենայացման ու ռացիոնալիզատորական ձեռնարկումների անցկացումը շինարարության բոլոր օբյեկտներում: Միայն աշխատանքներում արտահայտվող անպայմանության և դիմազրկության գլխովին վոչնչացման և Ստալինյան պայմանների կենսագործման հիման վրա հնարավոր է լրիվ կատարել 32 թվի շինարարության պլանները:

### 8.
### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Համագումարը նշում է, վոր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարում, գյուղի չափով աճել է կոմյերիտմիության հասարակական—քաղաքական նշանակությունը, նրա դասակարգային մարտունակությունը: Առանձնապես 7–րդ



համագումարից մինչև 8–րդ համագումարը անցած շրջանը, գյուղական կոմսոմոլի համար դասակարգային դաստիարակության, քաղաքական, գաղափարական աճման ու զարգացման մի կարևորագույն էտապ էր: Կոմյերիտմիությունն իր ամբողջության մեջ բոլշևիկյան դիրքեր գրավեց դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարում և հանդիսացավ կուսակցության լավագույն օգնականը—գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում: ՀԼԿՅԵՄ գյուղական կազմակերպությունների արդեն 70%-ից ավելին գտնվում է կոլտնտեսությունների մեջ:

Համագումարը նշում է, վոր գյուղական կոմսոմոլի կողմից համատարած կոլեկտիվացման համար մղվող պայքարի ճակատը, այժմ հանդիսանում է ամենապատասխանատու ճակատամասը: Կոլխոզային կոմսոմոլի աշխատանքի կարևորագույն և վճռական ճակատամասը հանդիսանում է կոլտնտեսությունների կազմակերպչական–տնտեսական և քաղաքական ամրացման խնդիրը, կոլտնտեսությունների աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրները:

Աշխատանքի կազմակերպումը, պլանավորումը և ռացիոնալիզացիան կոլտնտեսություններում, սոցմրցման և հարվածայնության ամենալայն ծավալումը, աշխատանքի ամբողջ ծանրության տեղափոխումը դեպի բրիգադը,—ահա կոմսոմոլի աշխատանքի գլխավոր խնդիրները գյուղում:

Համագումարն արձանագրում է, վոր դեռ բոլոր բջիջները աշխատանքի կենտրոնում չի դրված ներկոլտնտեսական շինարարության խնդիրները, դեռ կազմա–

կերպությունները անբավարար են պայքարում կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման մասին Համ. Կ(բ)Կ. Կենտկոմի փետրվարի 4-ի վորոշման կենսագործման համար և դեռևս կոլտնտեսական բոլոր բջիջները չեն, վոր պատասխանատու յեն զգում իրենց կոլտնտեսական բոլոր պլանների կատարման համար:

«Մի շարք վայրերում կոմյերիտականները կոլտնտեսության մեջ թույլ են հայտնաբերում իրենց՝ ինչպես աշխատանքի դիսցիպլինայի համար մղվող պայքարում, այնպես էլ մանավանդ կոմսոմոլը գյուղում դեռևս չափազանց թույլ կերպով է թափանցում կոլտնտեսության, տնտեսական-կազմակերպչական աշխատանքի մեջ. թույլ է մասնակցում կոլտնտեսության ղեկավարությանը, պլանը կազմելու աշխատանքի կանոնավոր կազմակերպմանը, առաջ քաշմանը, կադրերի պատրաստման բնագավառում, յեկամուտների ճիշտ բաշխմանը, տեխնիկայի բարձրացմանը, հողի մշակմանը, արտադրության լավագույն ձևեր մտցնելու և այլ բնագավառում» (Համ. ԼԿՅԵՄ 9-րդ համագումարի բանաձևից): Դրանից յելնելով *համագումարը ԼԿՅԵՄ կազմակերպություններին պարտադրում է վճռական բեկում կատարել կոլտնտեսական աշխատանքի կազմակերպման բնագավառում, բջիջի և ամեն մի կոմյերիտական մասնակցությունը բարձրացնելով կոլտնտեսության հարցերում, առաջին հերթին այնպես անել, վոր* յուրաքանչյուր կոլտնտեսության կից բջիջ իմանա իր կոլտնտեսության հեռանկարները, նրա աշխատանքի բոլոր բնագավառները, արտադրական պլանը, աշխատանքի թույլ կողմերը, ակտիվ *մասնակցի արտադրական խորհրդակցություններին վորպեսզի իսկապես ՀԼԿՅԵՄ բջիջը դառնա «պլանային աշխատանքի ինիցիատորը կոլխոզում, ձգտելով տնտեսական աշխատանքի տարեկան և կվարտալային պլանները կազմելը, ապահովելով այդ պլանների մեջ կուսակցության գծի գործնական արտացոլումը, ցանքային տարածությունների լայնացման անասնաբուծության տեխնիկական կուլտուրաների զարգացման նկատառմամբ, բանվորական պլանը հասցնելով մինչև յուրաքանչյուր կոլտնտեսական, յուրաքանչյուր բրիգադ, հողամաս և գործարանների օրինակով ծավալելով շարժումը հանդիպական գյուղատնտեսական պլանների համար» (9-րդ համագումարի բանաձևից):*

*Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է համառ և սիստեմատիկ մասսայական դաստիարակչական աշխատանք ծավալի կոլտնտեսական մասսաների մեջ, նրանց դաստիարակելու, վերամշակելու, նրանց մեջ զարգացնելու համար կոլլեկտիվիստական վոգին և կոմյերիտական վերաբերմունքը հանդեպ կոլեկտիվում իրենց հանձնարարված աշխատանքը: Միայն մասսայական-դաստիարակչական խորացրած աշխատանքով հնարավոր կլինի կոլտնտեսական մասսաների միջից արմատախիլ անել մանր-բուրժուական, սեփականատիրական տրամադրությունները ու նրանցից պատրաստել անդասակարգ սոցիալիստական հասարակության ակտիվ շինարարներ:*

*Ուշադրության կենտրոնում վերցնելով սովխոզ-կոլխոզ շինարարության խնդիրները՝ գյուղի կոմյերիտական կազմակերպությունները չպետք է աչքաթող անեն նաև անհատական աշխատավորական տնտեսությունների մեջ տարվող մասսայական-դաստիարակչական աշխատանքները, նրանց ցույց տրվելիք ամենօրյա*

ոգնությունն ու ուժանդակությունը-կազմակերպել նր-
րանց վարի, ցանքսի, բերքի բարձրացման խնդիրները.
նրանց մոտիկից մասնակից դարձնել գյուղում կուսակ-
ցության կողմից առաջադրված խնդիրների կատարմա-
նը: Այս կապակցությամբ հատուկ ուշադրություն դար-
ձնել բատրակա-չքավորական խմբակների աշխուժացմա-
նը, նրանց գյուղի արտադրական-տնտեսական կյանքին
վերաբերվող խնդիրներին կոնկրետ մասնակից դարձնե-
լու համար:

Համագումարն արձանագրում է, որ միայն ցանք-
սի և բերքահավաքի պլանների լրիվ կատարումը, Համ.
Կ.(բ) Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումների հե-
տևողական կատարումը, կոլտնտեսությունների կազմա-
կերպչական-տնտեսական ու քաղաքական ամրացումը,
լիակատար հնարավորություն կտեղծի կատարելու
կուսակցության մարտական դիրեկտիվը,-32 թվին Հա-
յաստանի բամբակացան շրջաններում, իսկ 33 թվին ամ-
բողջ Հայաստանում կենսագործելու համատարած կո-
լեկտիվացումը և այդ հիման վրա կուլակությունը վոր-
պես դասակարգ վերացնելու համար:

### 9.

### ԲԱՄԲԱԿԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համագումարը նշում է, որ առանձնապես բամբա-
կացան շրջանների կոմյերիտական կազմակերպություն-
ները պետք է ուշադրության կենտրոնում վերցնեն կա-
տարած աշխատանքի փորձը, վորովհետև միայն վո-
բակական ցուցանիշների լրիվ կատարումով հնարավոր
է 32 թ. 30.000 հեկտար բամբակի պլանները կատա-
րել: Բամբակացան շրջանների ԼԿՅԵՄ կազմակերպու-



թյունները անցյալ տարվա դասերը նկատի ունենալով,
պետք է կանխեն անցյալ տարվա սխալները-մաքսիմում
ուշադրություն դարձնեն ագրոձեռնարկումների լրիվ
կիրառմանը, բոլշևիկյան պայքար մղեն բամբակի հե-
տագա հողատար մշակման համար, ապահովելով բամ-
բակի բարձր բերքատվությունը:

Այս տարի 30,000 հեկտար բամբակի պլանի քանա-
կական և մանավորապես վորակական ցուցանիշների
կատարումը պետք է հանդիսանա բամբակացան շրջան-
ների ԼԿՅԵՄ կազմակերպությունների քաղաքական քն-
նությունը՝ կուսակցության գլխավոր գծի համար մղ-
վող պայքարում:

Համագումարը միանգամայն անբավարար համարե-
լով խորհտնտեսություններում և ՄՏԿ-ներում կոմյերի-
տական աշխատանքի դրվածքը, առաջարկում է շրջան-
ների ԼԿՅԵՄ կազմակերպություններին հատուկ ուշա-
դրություն դարձնել ԼԿՅԵՄ խորհտնտեսական և ՄՏԿ-
ների բջիջների վրա, նրանց ամրացնել լավագույն կոմ-
յերիտական ակտիվով, անհատական կերպով վերանայել
ամեն մի սովխոզին և ՄՏԿ-ի բջիջի քարտուղարներին,
և կարճ ժամանակամիջոցում անցկացնել սովխոզային և
ՄՏԿ-ների ԼԿՅԵՄ ակտիվի մասսայական պատրաստում:

Սովխոզներում և ՄՏԿ-ներում կոմյերիտական աշ-
խատանքը պետք է ընթանա այն ուղիով, որ բջիջային
աշխատանքի ծանրության կենտրոնը տեղափոխվի դե-
պի բրիգադ, օղակ, վորպեսզի կոմսոմոլը ընդգրկի աշ-
խատանքի բոլոր պրոցեսները, ռացիոնալիզացիա
մտցնի աշխատանքներում, ծավալի սոցմրցակցությունն
ու հարվածայնությունը, խիստ հասկացողություն և ո.

ժանդակություն ունենա ինվենտարի և բանվորական ու
քաշող ուժի վրա, պայքարի աշխատանքի դիսցիպլինա-
յի և կարգապահության բարձրացման, գործավարձի
ւրիվ և անշեղ կիրառման համար, վորոնց հիման վրա
միայն հնարավոր է բարձրացնել խորհտնտեսություննե-
րի և ՄՏԿ-ների աշխատանքի արտադրողականությունը,
նրանց առաջավոր դերը գյուղի սոցիալիստական վերա-
կառուցման գործում։

## 10.

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Համագումարը նշում է, վոր սոցիալիստական անաս-
նաբուծության զարգացման ասպարեզում ձեռք բերված
նվաճումները չափազանց հեռու են բավարար լինելուց.
վորակական ցուցանիշները հետ են մնում քանակական
նվաճումներից։ Անասնապահական խորհտնտեսություն-
ներում և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում
ատ հիմքերի վրա չի դրված անասունների խնամքը,
ացիոնալ կերակրումը, աշխատանքի կազմակերպումը,
ընկած է աշխատանքի դիսցիպլինան և արտադրողակա-
նությունը, լայն տեղ է գտել դիմազրկությունը. հաճա-
խակի յեն անասունների փչացման դեպքերը, հաճախ
ւրիվ չի կիրառվում գործարքը։ Համագումարը պարտա-
վորեցնում է ՀԼԿՅԵՄ բոլոր և առաջին հերթին անասնա-
պահական շրջանների կազմակերպություններին Ստա-
լինյան վեց պայմանների անշեղ կիրառման հիման վրա,
վճռական բեկում առաջացնել անասնապահական խորհ-
տնտեսությունների, կոլտնտեսական ապրանքային ֆեր-
մաների արտադրողականության բարձրացման գործում։



Այս ֆրոնտում կոմյերիտական ուժերի մաքսիմալ մոբ-
լիզացիան անհրաժեշտ է նրա համար, վոր «31–32 թվերի
անասնապահության զարգացման ասպարեզում պետք է
հանդիսանան այնպիսի վճռական բեկման տարիներ, ինչ-
պիսին եյին 29 թվի և 30 թվականները սոցիալիստական
հացահատիկային տնտեսություն կազմակերպելու գոր-
ծում» (Համ Կ (բ) Կ կենտկոմի և ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի 31 թ
հուլիսի 30-ի վորոշումից)։

Համագումարը գոհանակությամբ արձանագրում է
սիլոսի չեֆության գծով 31 թվին կոմսոմոլի տարած
պայքարը, վորը ապահովեց վորոշ նվաճումներ և նախա-
պատրաստեց սիլոսացման գործի հետագա ծավալմանը։

Անասնապահության սոցիալիստական զարգացման
կարեվորագույն միջոցներն են գոմաշինարարությունը,
կերի ապահովումն և ռացիոնալ կերակրումը, անասնա-
պահության ոժանդակ ճյուղերի զարգացումը, մատղաշ-
ների խնամումը։ Համագումարն այս տեսակետից ԼԿՅԵՄ
անասնապահական շրջանների կոմյերիտական կազմա-
կերպությունների խնդիրն է համարում պայքարել այս
տարվա 92,500 տոնն սիլոսի նոր գոմաշինարարության
ծավալման, խոզաբուծության, ճագարաբուծության
զարգացման համար։ Համագումարը վորպես մարտական
խնդիր առաջարկում է բոլոր կոմյերիտականներին լուրջ
ուշադրություն դարձնել ճագարաբուծության զարգաց-
մանը։ Յուրաքանչյուր կոմյերիտական և պիոներ պետք
է ունենա ճագար և իր անձնական որինակով պետք է
դառնա նրա զարգացման նախաձեռնողն ու կազմակեր-
պիչը։

Բանվոր գ[illegible]րության կուլտ-



37629
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ...
ՀՍԽՀ—ССРА

կենցաղային պահանջների սիստեմատիկ վերելքի ու բանվորության ապրելակերպի համար ավելի բարեկեցիկ վիճակ ստեղծելու գործում, խոշոր նշանակություն է ստանում հանրային սննդի, բանվորական մատակարարման գործի լավագույն կազմակերպումը: Բանվորական մատակարարումը և աշխատավորական լայն մասսաների կուլտ-կենցաղային պայմանների բարելավումը պահանջում է զարգացնել խորհրդային կուլտուրական առևտուրը:

Համագումարը պահանջում է կոմյերիտական բոլոր կազմակերպություններից անհապաղ մշակել Համ. Կոմկուսի Կենտկոմի վերջին պատմական վորոշումները, ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ կազմակերպելու կոլտնտեսական շուկաներ, ծավալել լայն չափով կուլտուրական Խորհրդային առևտուրը, ապահովել կոմյերիտական կազմակերպությունների մասնակցությունն առևտրի զարգացման, սննդի կազմակերպման, բան. մատակարարման, մերձ-քաղաքային տնտեսությունների զարգացման գործում:

## 12.

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ.

Սովխոզների, ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների արտադրողականության բարձրացման, վորակի համար տարվող պայքարում, անհնար է լուրջ հաջողություններ ունենալ՝ առանց համապատասխան կադրերի պատրաստման աշխատանքների հետագա ծավալմանը: Մինչդեռ համագումարը նշում է, վոր կոմյերիտմիությունը չի անում համապատասխան մարմինների հետ



այն բոլորը, վոր անհրաժեշտ է գյուղատնտեսական կադրերի պատրաստման համար: Չնայած այս ասպարեզում ևս ձեռք բերված նվաճումներին, դեռևս անհրաժեշտ չափով պլանավորման չի ենթարկված գյուղատնտեսական կադրերի պատրաստման գործը: Անհրաժեշտ ուշադրություն չի դարձված կարճատև կուրսերի միջոցով մասնավորապես բամբակագործության անհրաժեշտ կադրեր, ագրո-լիազորներ, բրիգադիրներ, դաշտավարներ, անասնաբուծներ և այլն պատրաստելու խնդրին: Համագումարն անբավարար է գտնում խորհտնտեսների ուսուցման և կադրերի պատրաստման վորակը, ինչպես նաև ընդգրկված ուսանողների քանակը և Կենտկոմի առաջ խնդիր է դնում Հողժողկոմատի հետ մշակելու կոնկրետ միջոցառումներ, հետագայում խորհտնտեսների և կոլյերիտդպրոցների ցանցի լայնացման և վորակի բարձրացման համար:

## 13.

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ.

Հիշելով ֆաբգործուսների ցանցի ընդգրկման գործում ՀԼԿՅԵՄ 7-րդ համագումարից հետո ձեռք բերված խոշոր նվաճումները (ֆաբգործուսների թիվը բարձրացել է 20-ի), համագումարը դեռևս անբավարար է համարում ուսուցման վորակը ՖԶՈՒ-ներում, ինչպես նաև այնտեղ կոմսոմոլի գծով տարվող քաղաքական դաստիարակչական աշխատանքները: Համագումարը նշում է, վոր մի շարք ՖԶՈՒ-ներում խոշոր չափերի յեն հասնում ուսանողության հոսունությունը (Լենինականի և այլն), վորը մեծ չափով հարվածում է կադ-

բերի պլանային պատրաստման գործը և պատճառ ե ղանում նյութական միջոցների աննպատակ ծախսմա նը: Համագումարը գտնում է, որ ՖԶՈՒ-ներում, այս դրությունն առաջ է գալիս տեղի ԼԿՅԵՄ կազմակերպությունների և կոմիտեների անբավարար ուշադրությունից, մասսայական-ագիտացիոն աշխատանքի թույլ դրվածքից, ինչպես և մի շարք տնտեսական օրգանների դեպի ՖԶՈՒ-ներն անուշադիր վերաբերմունքից: Կոմսոմոլի հետագա խնդիրն է ամրացնել ՖԶՈՒ-ները վորակյալ կադրերով, առանձնահատուկ ուշադրություն դարձնել նոր ընդունելությունների վորակի վրա, ավելի ընդհուպ մոտենալ արդյունաբերության համար ՖԶՈՒ-ների, տեխնիկումների, շինուսների և կարճատև կուրսերի միջոցով պատրաստվող կադրերի վորակի բարձրացման և կոմունիստական դաստիարակության խնդիրներին:

Համագումարը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեյին՝ համապատասխան մարմինների հետ միասին ուսումնասիրել կադրերի պատրաստման գործի դրվածքըն այն հաշվով, որ նախատեսնվեն և ձեռք առնվեն բոլոր միջոցները՝ 2-րդ հնգամյակում բուռն տեմպերով առաջ գնացող արդյունաբերությունը ապահովելու համար վորակյալ կադրերով:

## 14.

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ.

Երկրի ինդուստրացումը և գյուղի սոցիալիստական վերակառուցումն ընթացել են ու ընթանում են կուլտուրական ծավալուն շինարարության պայմաններում: Ընդարձակվել է տարրական, միջնակարգ դպրոց-



ների ու ինստիտուտների ցանցը. հիմնականում կենսագործվել է ընդհանուր պարտադիր ուսուցումը, լայն ծավալ է ստացել համատարած գրագիտության համար մղվող պայքարը:

Համագումարը գոհունակությամբ է նշում 600 կոմյերիտականների մոբիլիզացիան մանկավարժական աշխատանքի ֆրոնտում. միաժամանակ համագումարը նշում է, որ կուլտուրական շինարարության տեմպերը դեռևս հետ են մնում վողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման տեմպերից ու մասսաների աճող կուլտուրական պահանջներից:

Համագումարն արձանագրում է, որ կոմյերիտական ու պիոներական կազմակերպությունները դեռևս հարկ յեղած ուշադրությունը չեն դարձնում դպրոցական շինարարության խնդիրներին. դանդաղորեն և անբավարար է կենսագործվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերի 5-ի վորոշումը՝ տարրական և միջնակարգ դպրոցների վերաբերյալ:

Համագումարը ԼԿՅԵՄ դպրոցական կազմակերպություններին պարտավորեցնում է բարձրացնել գիտակցական դիսցիպլինան դպրոցներում, բարձրացնել ուսման վորակը, ուժեղացնել հանրագիտական առարկաների և «գիտության հիմունքների» տիրապետման համար մղվող պայքարը—դպրոցական աշխատանքներում ամրացնելով պոլիտեխնիկ հիմունքները:

Համագումարը ԼԿՅԵՄ բոլոր կոմիտեներից վճռաբար պահանջում է կոմյերիտական և արտամիութենական կուլտուրական ուժերի ամբողջական մոբիլիզացիայի հիման վրա բոլշևիկորեն կենսագործել ՀամԿոմկուսի հոկտեմբերի 31-ի վորոշումը՝ Հայաստանը այս տա-

ների պլանային պատրաստման գործը և պատճառ է դառնում նյութական միջոցների աննպատակ ծախսմանը: Համագումարը գտնում է, վոր ՖԶՈՒ-ներում, այս դրությունն առաջ է գալիս տեղի ԼԿՅԵՄ կազմակերպությունների և կոմիտեների անբավարար ուշադրությունից, մասսայական-ագիտացիոն աշխատանքի թույլ դրվածքից, ինչպես և մի շարք տնտեսական օրգանների դեպի ՖԶՈՒ-ներն անուշադիր վերաբերմունքից: Կոմսոմոլի հետագա խնդիրն է ամրացնել ՖԶՈՒ-ները վորակյալ կադրերով, առանձնահատուկ ուշադրություն դարձնել նոր ընդունելությունների վորակի վրա, ավելի ընդհուպ մոտենալ արդյունաբերության համար ՖԶՈՒ-ների, տեխնիկումների, շինուսների և կարճատև կուրսերի միջոցով պատրաստվող կադրերի վորակի բարձրացման և կոմունիստական դաստիարակության խնդիրներին:

Համագումարը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեին՝ համապատասխան մարմինների հետ միասին ուսումնասիրել կադրերի պատրաստման գործի դրվածքն այն հաշվով, վոր նախատեսնվեն և ձեռք առնվեն բոլոր միջոցները՝ 2-րդ հնգամյակում բուռն տեմպերով առաջ գնացող արդյունաբերությունը ապահովելու համար վորակյալ կադրերով:

## 14. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ.

Երկրի ինդուստրացումը և գյուղի սոցիալիստական վերակառուցումն ընթացել են ու ընթանում են կուլտուրական ծավալուն շինարարության պայմաններում: Ընդարձակվել է տարրական, միջնակարգ դպրոց-



ների ու ինստիտուտների ցանցը. հիմնականում կենսագործվել է ընդհանուր պարտադիր ուսուցումը, լայն ծավալ է ստացել համատարած գրագիտության համար մղվող պայքարը:

Համագումարը գոհունակությամբ է նշում 600 կոմյերիտականների մոբիլիզացիան մանկավարժական աշխատանքի ֆրոնտում. միաժամանակ համագումարը նշում է, վոր կուլտուրական շինարարության տեմպերը դեռևս հետ են մնում վողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման տեմպերից ու մասսաների աճող կուլտուրական պահանջներից:

Համագումարն արձանագրում է, վոր կոմյերիտական ու պիոներական կազմակերպությունները դեռևս հարկ յեղած ուշադրությունը չեն դարձնում դպրոցական շինարարության խնդիրներին. դանդաղորեն և անբավարար է կենսագործվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերի 5-ի վորոշումը՝ տարրական և միջնակարգ դպրոցների վերաբերյալ:

Համագումարը ԼԿՅԵՄ դպրոցական կազմակերպություններին պարտավորեցնում է բարձրացնել գիտակցական դիսցիպլինան դպրոցներում, բարձրացնել ուսման վորակը, ուժեղացնել հանրագիտական առարկաների և «գիտության հիմունքների» տիրապետման համար մղվող պայքարը—դպրոցական աշխատանքներում ամրացնելով պոլիտեխնիկ հիմունքները:

Համագումարը ԼԿՅԵՄ բոլոր կոմիտեներից վճռաբար պահանջում է կոմյերիտական և արտամիութենական կուլտուրական ուժերի ամբողջական մոբիլիզացիայի հիման վրա բոլշևիկորեն կենսագործել Համկոմկուսի հոկտեմբերի 31-ի վորոշումը՝ Հայաստանը այս տա-

րի համատարած գրագիտության յերկրի վերածվելու մասին: Կուլտուրական շինարարության բնագավառում կոմյերիտմիության աշխատանքը պետք է ամբողջապես նախապատրաստի 32–33 թվի 3-ամյա պարտադիր պոլիտեխնիկ ուսուցման և 2-րդ հնգամյակում տասնամյա պարտադիր ուսուցման կենսագործումը:

## 15.

## ԱՎԵԼԻ ԾԱՎԱԼՈՒՆ ՈՒ ԱՆՀԱՇՏ ՊԱՅՔԱՐ՝ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ.

Ամբողջ ֆրոնտով տարվող ծավալուն սոցիալիստական արշավը ընթանում է դասակարգային ամենակատաղի պայքարի պայմաններում:

Մեռնող դասակարգի վերջին մնացորդները՝ որհասական դիմադրություն են ցույց տալիս մեր առաջխաղացումը կասեցնելու և հաջողությունները վիժեցնելու համար, իրենց գոյությունն առժամանակ յերկարաձգելու նպատակով: Դասակարգային թշնամու դիմադրությունը ջախջախելու համար կոմսոմոլն իր ամբողջությանը մեջ տարել է համառ և կատաղի պայքար: Համագումարը միաժամանակ արձանագրում է, վոր գյուղական առանձին կազմակերպությունների օղակներում (Դարալագյազ, Ապարան, Շամշադին, Վեդիբասար) կոմյերիտական առանձին բջիջներ ու անհատ կոմյերիտականներ չդիմանալով դասակարգային թշնամու դիմադրությանը և նրանց կողմից հարուցված դժվարություններին՝ յենթարկվել են կուլակային վերասերման, կորցրել են իրենց դասակարգային, քաղաքական դեմքը և ընկնելով դասակարգային թշնամու ազդեցության տակ՝ ամբողջովին կատարել են թշնամու պատվերը՝ ընդդեմ խորհրդային իշխանության:



Այդ հանգամանքն իր ամբողջ սրությամբ դնում է կոմյերիտական վողջ կազմակերպության և յուրաքանչյուր կոմյերիտականի դասակարգային զգոնության է՛լ ավելի բարձրացման, կուլակության, ֆաշիստական դաշնակցության, դաշսոմոլի, աշխատանքի նոր ձևերի մերկացման և ջախջախման խնդիրը: Անհրաժեշտ է էլ ավելի ծավալուն ու խորացրած պայքար օպորտունիզմի դեմ, աջ թեքման դեմ, վորպես ներկա շրջանում գլխավոր վտանգի «ձախ» խոտորումների, թեքումների դեմ ցուցաբերվող հաշտվողականության, նեխված լիբերալիզմի և տրոցկիստական կոնտրաբանդայի դեմ և՛ պրակտիկայում և՛ տեսության բնագավառում, այդ պայքարի հիման վրա զորահավաքի յենթարկելով կոմյերիտմիության, բանվոր, կոլտնտեսական և աշխատավոր յերիտասարդության լայն ուշադրությունը՝ կուսակցության կողմից առաջադրված խնդիրները անշեղորեն կենսագործելու համար:

## 16.

## ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ.

Դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի դիմադրության ջախջախման հիման վրա ծավալվող սոցիալիստական շինարարության պրակտիկայում աճել, կոփվել ու ամրացել է Հայաստանի լենինյան կոմյերիտմիությունը: Իր ամբողջության մեջ բարձրացել է ՀԼԿՅԵՄ-ի քաղաքական, գաղափարական մակարդակը ու դասակարգային զգոնությունը:

Վերջին մի տարում ՀԼԿՅԵՄ շարքերը լրացրել են 18,400 նոր մարտիկներ:

Համագումարը հիմնականում ճիշտ գտնելով Կենտ-

րոնական Կոմիտեյի քաղաքականությունը՝ միության աճման գործում, մատնանշում է կազմակերպության մի շարք օղակներում, միության աճման լենինյան քաղաքականության խեղաթյուրումը—փքուն տոկոսների հետևից վազելը,—սխալներ, որոնք նշվեցին Համ. ԼԿԵՄ Կենտկոմի 3-րդ պլենումում՝ ընկ. ՊՈՍՏԻՇԵՎԻ ճառում: Համագումարն անհրաժեշտ է գտնում նշել, որ այսուհետև էլ շարունակելով պայքարը աճման մերկ թվերի հետևից ընկնելու՝ պրակտիկայի, դեմ, ԼԿԵՄ կազմակերպությունները պետք է անհատական ընտրության հիման վրա, իրենց շարքերը սիստեմատիկորեն ընդգրկեն դասակարգային պայքարում փորձված հարվածային բանվոր, կոլտնտեսական և աշխատավոր յերիտասարդությանը, անդադար պայքարելով ինչպես աճման մերկ թվերի հետևից վազելու ու «համատարածության» դեմ աճման գործում, նույնպես և ինքնահոսի օպորտունիստական պրակտիկայի դեմ:

Համագումարն արձանագրում է, որ նոր վերջացած միության անդամակցական տոմսերի փոխանակման կամպանիան հանդիսացավ խոշոր քաղաքական կամ պանիա, որի ընթացքում կոմյերիտական կազմակերպությունը հիմնականում ապահովեց իր շարքերի և ուժերի մոբիլիզացիան՝ 5-ամյակի ավարտական տարվա պլանների կատարման գործում, կոմյերիտմիության ակտիվ մասնակցությունն ապահովելու տեսակետից:

Համագումարը միաժամանակ նշում է, որ կազմակերպությունը պետք է խորացրած աշխատանք ծավալի տոմսերի փոխանակման ընթացքում դուրս մնացած կոմյերիտականներին օգնելու և նրանց միության շարքերը վերադարձնելու համար: Համագումարն առաջարկում է



կոմյերիտական բոլոր կազմակերպություններին մոտակա ժամանակամիջոցում ստուգելու կոմյերիտականների կողմից վերցրած պարտավորությունների կատարումը:

Համագումարը նշում է, որ միության մեջ նոր ընդգրկվածների և վողջ կոմսոմոլի Մարքս-լենինյան դաստիարակությունը գտնվում է դեռևս անբավարար դրության մեջ—«յեթե կոմյերիտական գործնական կազմակերպչական շրջահայացքը զգալիորեն ընդարձակվել է, ապա տեսական գիտելիքների ասպարեզում նրանք դեռևս լրջորեն հետ են մնում» (ՊՈՍՏԻՇԵՎ):

Դրանից յելնելով Համագումարը բոլոր կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում յերիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակության խնդիրների վրա, և պահանջում է որ՝ կոմսոմոլը ԴԸԼ-խովլին ընդգրկել քաղ. խմբակներում, լուրջ ուշադրություն դարձնելով քաղ. պարապմունքների վորակը բարձրացնելու գործին, կարճատև կուրսերի միջոցով պատրաստելով համապատասխան կադրեր, պրոպագանդիստներ: Համագումարը գտնում է, որ կոմյերիտական հանրապետական և շրջանային ակտիվի տեսական պատրաստականությունը ևս հետ է մնում ծավալուն սոցիալիստական շինարարության պահանջներից: Կոմյերիտական մասսաների հետզհետե աճող ակտիվությունից: Չի կիրառվում Համ. ԼԿԵՄ Կենտկոմի 3-րդ պլենումի վորոշումն այն մասին, որ անհրաժեշտ է «միության ամբողջ ակտիվի համար սկսած, խմբակից, բջիջից և վերջացրած կենտկոմով, կիրառել գիտելիքների պարտադիր քաղ. մինիմում»:

Մատնանշելով հեղափոխական թեորիայի հսկայա-

կան նշանակությունը մեր սոցիալիստական շինարարության հեղափոխական պրակտիկայում, Համագումարը պարտադրում է կոմսոմոլի նոր լրացումը և վողջ կոմսոմոլը գլխովին ընդգրկել Մարքս-լենինյան ուսուցման ցանցի մեջ:

Կոմյերիտական մասսայի տեսական-իդեալական մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ԼԿՅԵՄ լայն մասսաների սեփականությունը դարձնել Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի աշխատությունները, ամեն մի կոմյերիտականի հասցնել կոմյերիտական մամուլը, «Ավանգարդ»-ը, «Յերիտ-Բոլշևիկ»-ը: Համագումարը նշելով ԼԿՅԵՄ-ի պատմության ուսումնասիրության խոշոր դաստիարակչական նշանակությունը և արձանագրելով այդպիսի ձեռնարկի բացակայությունը, հանձնարարվում է Կենտրոնական Կոմիտեյին մշակել կոնկրետ միջոցառումներ և ամենակարճ ժամանակամիջոցում ապահովել ՀԼԿՅԵՄ-ի պատմության հրատարակումն ու մասսայականացումը:

## 17.

## ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ.

Պատերազմի վտանգը և իմպերիալիզմի կողմից կազմակերպվող ինտերվենցիան պարտադրում է ՀԼԿՅԵՄ-ին՝ ամենաարագ տեմպերով ռազմականացման յենթարկելու իր շարքերը:

Կոմյերիտականը միմիայն նա յե, ով պատրաստվում է ռազմականապես, սովորում և յուրացնում է ռազմական տեխնիկան:

Համագումարը նշելով կոմսոմոլի ռազմական աշխատանքների դեռևս անբավարար դրվածքը, ռազմաօդային և ռազմա-ծովային տորմիղների շեֆության



գծով անբավարար աշխատանքի ծավալումը, առաջարկում է կոմյերիտական բոլոր կազմակերպություններին անհապաղ կենսագործելու 9-րդ համագումարի վորոշումները: Համագումարը գտնում է, վոր ռազմական աշխատանքների ներկա թափն ու բովանդակությունը դեռևս հետ է մնում պատերազմի սպառնացող վտանգից և բանվորագյուղացիական Կարմիր բանակի տեխնիկական սպառազինման պահանջներից:

Համագումարը վճռականապես առաջարկում է բոլոր կազմակերպություններին, ամենակարճ ժամանակամիջոցում վողջ կոմսոմոլը ընդգրկել ռազմական խմբակներում և ՊԱԶԸ-Ավիաքիմի շարքերում: Արմատապես բարելավել ՊԱԶԸ-Ավիաքիմի, Կարմիր Խաչի, հակա-ոդային պաշտպանության խմբակների, ռազմ. ուսուցման կայանների աշխատանքները, ստեղծել վճռական շրջադարձ, բանակի հետ պահպանվող կապի և շեֆական պարտականությունների մեջ:

Համագումարն առաջարկում է բոլոր կազմակերպություններին անհապաղ ձեռնարկել ռազմական ուսուցման նոր սիստեմի, ուսուցման կայանների փորձի ծավալմանը, կենսագործելով պարտադիր ռազմական ուսուցումը կոմյերիտականների համար:

Միաժամանակ Համագումարը պահանջում է բոլոր կազմակերպություններից հատուկ աշխատանք ծավալել ֆիզկուլտ կազմակերպության գծով, ապահովել կոմյերիտմիության և աշխատավոր յերիտասարդության գլխովին ընդգրկում ֆիզկուլտ. կազմակերպության շարքերում և նրանց ակտիվ մասնակցությունը առողջապահական գծով կատարվող ձեռնարկումներին. Համագումարը պարտադիր է դարձնում առաջի հերթին կոմյերի-

ռական ակտիվի ընդգրկումը «պատրաստ աշխատանքի և յերկրի պաշտպանության կրծքանշանի» նորմաների մեջ:

18.

Նշելով կոմյերիտական աշխատանքի դեռևս անբավարար դրվածքն ազգային փոքրամասնությունների մեջ, ազգային փոքրամասնություններից կադրերի անբավարար առաջ քաշումը, նրանց պատրաստումն ու վերապատրաստումը, Համագումարը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեյի ձեռք առնելու վճռական միջոցներ ամրացնելու ազգային փոքրամասնությունների շրջաններում կոմյերիտական ապարատները: Ազգային փոքրամասնություններից վորակյալ կադրեր պատրաստելու համար, ձեռնարկել կուրսերի կազմակերպմանը, ուժեղացնել Կենտկոմի ոպերատիվ ղեկավարությունն ազգային փոքրամասնությունների շրջանների նկատմամբ: Համագումարն առաջարկում է բոլոր կոմյերիտական կազմակերպություններին արմատապես վերակառուցել «Թեթև-հեծելազոր»ների աշխատանքները, այդպիսին ամբողջապես ոգտագործելով պետ. ապարատի առանձին ոլակներում, գոյություն ունեցող բյուրոկրատիզմի, վոլոկիտայի, թափթփվածության դեմ, մղվող պայքարում և տնտեսական ու քաղաքական այլ կամպանիաներում:

19.

ՅԵՐԽԱՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

Արձանագրելով պիոներական աշխատանքների բնագավառում, վորոշ նվաճումներ (7-րդ Համագումարից հետո պիոներ կազմակերպությունը 52,000-ից բարձրացել է 114.000 հոգու) այնուամենայնիվ Համագումարն



նշում է, վոր կոմյերիտական կազմակերպությունները շատ անբավարար աշխատանք են ծավալում յերեխաների կոմունիստական դաստիարակության ուղղությամբ. դեռևս արմատական բեկում չկա յերեխաների մեջ տարվող աշխատանքներում:

Համագումարը մատնանշում է, վոր պիոներ կազմակերպության անբավարար աշխատանքների դրվածքի առաջին հերթին պատասխանատու յե նրա անմիջական ղեկավար-կոմսոմոլը: «Լենինյան կոմսոմոլը վորպես պիոներական կազմակերպության անմիջական ղեկավարը՝ իր պրակտիկ ամենորյա աշխատանքներում չափազանց անբավարար է ղեկավարում նրան և թույլ ուշադրություն է դարձնում նրա աշխատանքներին» (Համ. Կ(բ)Կ Կենտկոմի ապրիլի 21-ի վորոշումից):

Համագումարը ԼԿՅԵՄ բոլոր կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում պիոներ կազմակերպության աշխատանքների այս անբավարար դրվածքի վրա և պահանջում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ապրիլի 21—ի վորոշման հիման վրա վճռական շրջադարձ կատարել կոմյերիտական ղեկավարության վորակը բարձրացնելու և լավագույն հարվածայիններին պիոներական կազմակերպությանը ամրացնելու համար:

Միայն այն պայմաններում հնարավոր է լայն ծավալել աճող սերնդի կոմունիստական դաստիարակության գործը, պիոներ կազմակերպության ակտիվությունն ուղղել, նրանց առաջ դրվող հիմնական խնդիրների լուծմանը,—գիտության հիմունքների տիրապետմանը, դպրոցական ուսուցման վորակի բարձրացմանը, գիտակից դիսցիպլինայի ամրացմանը, պոլիտեխնիզացիայի հաջող կիրառմանը:

Համագումարը առաջարկում է կազմակերպության բոլոր օղակներին հատուկ ուշադրություն կենտրոնացնել յերեխաների ֆիզկուլտ–առողջապահական դաստիարակության խնդիրների վրա: Համագումարը պահանջում է ԼԿՅԵՄ բոլոր կազմակերպություններից հասարակական–տնտեսական աշխատանքների ծանրաբեռնվածությունից մաքսիմալ չափով ազատել յերեխաներին, ստեղծել բոլոր նախապայմանները նրանց մտածողության զարգացման համար և դպրոցաարտադրական խնդիրների կատարմանն ապահովել յերեխաների ակտիվ մասնակցությունը:

Համագումարնիր ամբողջ կարևորությամբ դնում է պիոներական կազմակերպության համար վորակյալ կադրերի պատրաստման անհրաժեշտությունը, վորը հանդիսանում է կարևոր միջոցներից մեկը բարձրացնելու պիոներ կազմակերպության աշխատանքների վորակը ամբողջապես ապահովելու յերեխաների կոմունիստական դաստիարակության դրվածքը ստորին օղակներում: Պիոներական կադրերի պատրաստման համար՝ Համագումարն անհրաժեշտ է գտնում 32—33 ուսումնական տարում մանկավարժական տեխնիկումներում և կոմյերիտական համալսարաններում բացել պիոներ աշխատողների հատուկ բաժիններ:

## 20.

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՅԵՎ ՈՊԵՐԱՏԻՎ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համագումարը նշում է, վոր Համ. Կոմկուսի 17–րդ կոնֆերենցիայի կողմից առաջադրված բարդ, վորակով ավելի բարձր խնդիրներում կոմյերիտմիության ակտիվ մասնակցությունը կապահովի միայն այն դեպ-



քում, յեթե կոմյերիտական վողջ օղակները վերից վար արմատական վերակառուցման կյենթարկվեն իրենց աշխատանքերը՝ այդպիսին Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 31 թվի մարտի 21–ի վորոշման հիման վրա դեպի ցեխ․ ամենա, բրիգադա, օղակ, ագրադետ, տեղափոխելու իմաստով: Համագումարը նշելով կազմակերպության այս ուղղությամբ տարված անբավարար աշխատանքներ, առաջարկում է Կենտրոնական Կոմիտեյին և ԼԿՅԵՄ բոլոր օղակների ամենակարճ ժամանակամիջոցում ինչպես քաղաքում նույնպես և գյուղում կոմյերիտական աշխատանքի ծանրությունը տեղափոխել ստորին օղակը: Կոմյերիտական խմբակներն ու կազմակերպիչները պետք է հանդիսանան աշխատանքի հիմնական օղակները: Գյուղական կոմսոմոլի հիմնական խնդիրն է նաև բարձր աստիճանի հասցնելու հենակետային բջիջների աշխատանքները:

,,որա․ուբլու վոյյ Կուևո հ:կՊմևևդք յա՞ վգնոտիտիվ և առօրյա ղեկավարության ու կատարման սիստեմատիկ ստուգման միջոցով է, վոր կբարձրացվի կոմյերիտական աշխատանքի վորակը, կազմակերպության և նրա յուրաքանչյուր անդամի պատասխանատվության գիտակցությունն առաջադրված խնդիրների և վորոշումների կատարման գործում:

Համագումարը տնտեսական, ֆինանսական, արտադրական պլանների կատարման ցուցանիշներով է գնահատելու յուրաքանչյուր շրջանային, բջիջային ղեկավարության ընդունակությունը՝ կոմյերիտական բջիջի աշխատանքները գլխավորելու և այդպիսին կուսակցության գլխավոր գծին ի սպաս դնելու գործում: Համագումարը պահանջում է ավելի բարձր մակարդակի

հասցնել ղեկավարության վորակը, ղեկավարության մեջ առաջ քաշել նոր լավագույն հարվածայիններին:

Համագումարն անհրաժեշտ է գտնում արմատապես վերակառուցման յենթարկել կոնֆլիկտային հանձնաժողովի աշխատանքները, այն նեղ, «կոմյերիտական դատարանական սահմաններից» դուրս բերելու և դարձնելու միության աճման, նրա գաղափարական դաստիարակչական որինապահության գործոն ու դաստիարակիչ լծակներից մեկը, ընդգրկելով կոնֆլիկտային հանձնաժողովների աշխատանքներում կոմյերիտական առաջավոր ակտիվին:

21.

Համագումարը նշում, վոր ՀԼԿՅԵՄ-ի աշխատանքների դրվածքը ինտերնացիոնալ դաստիարակության ուղղությամբ պետք է ընթանալ Լենինյան ազգային քաղաքականության հիմունքներով, աճող և ամրացող Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական–քաղաքական հիմքերի է՛լ ավելի ամրացման նշանաբանով:

ՀԼԿՅԵՄ-ի խնդիրն է կուսակցության ղեկավարությամբ անողոքաբար շարունակել ծավալուն պայքարը լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների խախտելու յուրաքանչյուր փորձի դեմ, վճռականապես ջախջախելով ազգային հարցում, վորպես գլխավոր վըտանգի մեծապետական շովինիզմի ամեն տեսակի արտահայտությունները, ինչպես և անխնա պայքար կազմակերպելով տեղական նացիոնալիզմի և նրանց կոնկրետ կրողների դեմ, բարելավելով ՄՈՊՐ-ի աշխատանքները, բոլոր կոմյերիտականներին գլխովին ընդգրկելով ՄՈՊՐ-ի շարքերը, արմատապես բարելավելով կազմակերպության և նրա յուրաքանչյուր անդամի ինտերնացիո-



նալ աշխատանքները՝ պայքարի բոլոր ճակատամասերում:

Համագումարը մատնանշում է, վոր անհրաժեշտ է վճռականապես բարձրացնել կոմյերիտմիության դերն ու աշխատանքի վորակը հասարակական կազմակերպությունններում (ՄՈՊՐ, ՄԱՄ. ԿԱՆ. ՊՐՏ. և այլն) այդ բոլոր կազմակերպությունները ոգտագործելով յերիտասարդության ինտերնացիոնալ կոմունիստական դաստիարակության ամրացմանը, և լայն մասսաների մեջ դաստիարակչական աշխատանքների ծավալմանը:

22.

ՀԼԿՅԵՄ 8-րդ համագումարը տեղի յե ունենալու պատմական չափազանց պատասխանատու շրջանում, յերբ ԽՍՀՄ-ը հաղթականորեն ավարտում է առաջին հնգամյակը և գտնվում է 2-րդ, անդասակարգ սոցիալիստական հասարակակարգի կառուցման հոյակապ հնգամյակի նախորյակին:

Հեղափոխության ներկա ետապը կոմսոմոլի առաջ դնում է մի շարք նոր, վորակով ավելի բարձր խնդիրներ: Հետագա շրջանում ԼԿՅԵՄ բոլոր կազմակերպությունների վճռական խնդիրն է բարձր աստիճան մոբիլիզացիայի յենթարկել կոմյերիտմիության և նրա ղեկավարած բանվորագյուղացական արտամիութենական աշխատավոր յերիտասարդության հոծ մասսաների ամբողջ արտադրական էնտուզիազմն ու յեռանդը, հաջողությամբ կատարելու համար հնգամյակը՝ Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին և պատրաստել նրանց 2-րդ հնգամյակի խնդիրների բոլշևիկյան կատարմանը:

Ավարտական տարվա պլանների կատարման և 2-րդ հըն-

*կամյակի նախապատրաստական ամբողջ աշխատանքը պետք է ընթանա* սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը ավելի լայն ծավալելու ու ավելի բարձր աստիճանի փոխադրելու լոզունգի տակ, *ընդ որում անհրաժեշտ է ամրացնել ու արմատացնել սոցմրցման բարձրագույն ձևը ներկա էտապում՝ տնտ. հաշվարքային, «հասնել և անցնել» բրիգադների շարժումը, պայքարել տեխնիկայի տիրապետման համար, կոմսոմոլի մտահորիզոնը տեխնիկապես լայնացնելու համար, որովհետև* «Անելու քիչ բան է մնացել ուսումնասիրել տեխնիկան, ձեռք բերել գիտություն. և յեթե մենք այդ անենք, այդ ժամանակ մեզ մոտ կստեղծվի այնպիսի տեմպեր, վորոնց մասին մենք այժմ նույնիսկ չենք կարող յերազել», *որովհետև* «այդ ամբողջը պետք է գրավի յերիտասարդությունը, յեթե նա ցանկանում է լինել նոր կյանքի կառուցողը, յեթե նա ցանկանում է լինել հին գվարդիայի իսկական փոխարինողը» (ՍՏԱԼԻՆ)։

*Բարձր տեմպերի ու որակի համար մղվող պայքարում, աշխատանքի արտադրողականության համար մղվող պայքարում*, անհնար է հաղթանակ տանել առանց ընկ. Ստալինի պատմական 6 ցուցմունքները կոմսոմոլի աշխատանքի սիստեմում ամրացնելու։

*Կոմյերիտական ամբողջ յեռանդն ու կամքը պետք է նվիրել Ստալինյան պայմանների կիրառմանը, աշխատանքի որակի ու արտադրողականության բարձրացման գործին, քանի որ՝* «աշխատանքի արտադրողականությունը, այդ վերջին հաշվով ամենագլխավորն է նոր հասարակակարգի հաղթանակի համար», *քանի որ* «կապիտալիզմը վերջնականապես կարող է պարտվել նրանով, վոր սոցիալիզմը ստեղծում է նոր, ավելի շատ բարձր արտադրողականություն»։ (ԼԵՆԻՆ)։



*Համագումարը հանձնարարում է բոլոր կազմակերպություններին այժմվանից սկսել 2-րդ հնգամյակի պլանի մասսայականացումն ու ուսումնասիրումը։ Համագումարը բոլոր կազմակերպություններից վճռականապես պահանջում է ԼԿՅԵՄ մասսայական-ագիտացիոն քաղ. աշխատանքները փոխադրել ավելի բարձր աստիճանի վրա, դրան տալով կարևորագույն նշանակություն՝ կոմյերիտական մասսաների 2-րդ հնգամյակին նախապատրաստելու գործում, վորի «հիմնական քաղաքական խնդիրը հանդիսանում է կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգերի վերջնական վերացումը։ Դասակարգային տարբերություններ և շահագործում ծնող պատճառների լիակատար վոչընչացումը էկոնոմիկայի և մարդկանց գիտակցությանմեջ հաղթահարումը, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումը անդասակարգ սոցիալիստակ. հասարակության գիտակից և ակտիվ շինարարների» (17-րդ կուս. կոնֆերանսի բանաձևերից)։*

*Համագումարը նշում է, վոր կուսակցության բոլշևիկյան ղեկավարությամբ ՀԼԿՅԵՄ-ի աշխատանքները հետագայում ևս ծավալելու յեն դասակարգային կատաղի պայքարի պայմաններում։ Անհրաժեշտ է* հետագա ժամանակաշրջանում էլ ավելի բարձրացնել ամեն մի կոմյերիտականի դասակարգային զգոնությունն ու մարտունակությունը, դասակարգային թշնամու-կուլակի, դաշնակի ու դաշսոմոլի դեմ մղվող պայքարում, նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում, ամրացնել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերը, Համ.

ԼԿՅԵՄ-ի անբաժան ջոկատ ՀԼԿՅԵՄ-ի շարքերում կոփել Լենինյան ինտերնացիոնալ միասնության վոգին: Անհրաժեշտ է հետագայում ներմիութենական լայն դեմոկրատիայի և ծավալուն ինքնաքննադատության կիլի նախաձեռնությունը, նրանցից կոփել կայուն լենիբառման հիման վրա, ե՛լ ավելի բարձրացնել կոմսոմոնիստներ, սոցիալիստական շինարարության ակտիվ մարտիկներ:



# ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Լսելով և քննության առնելով ընկ. Պապիկ Մկրտչյանի զեկուցումը Կոմյերիտմիության Մարքս-Լենինյան դաստիարակության մասին, ՀԼԿՅԵՄ 8-րդ համագումարը արձանագրում է.*

*ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգն ու աշխատավորությունը թևակոխելով սոցիալիզմի կառուցման շրջանը, յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, կուլտուրական շինարարության բնագավառներում ձեռք են բերել պատմական խոշորագույն նվաճումներ:*

*Կուսակցության լենինյան գծի անշեղ կիրառման հետևանքով որ-որի վրա աճում է ԽՍՀՄ-ի ինդուստրիալ հզորությունը: Հնգամյակի 3-րդ վճռական տարում հաջողությամբ ավարտելով սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը՝ ինդուստրացման հզոր բազայի վրա, հնարավոր յեղավ գյուղատնտեսական մանր, փոշիացած տնտեսությունների միացումը կոլտնտեսություններում, խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության ստեղծումը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա հետևողականորեն շարունակվում է կուլակության վորպես դասակարգ լիկվիդացիան: Այս պատ-*

ժական նվաճումներն ապահովեցին «ամբողջովին և անվերադարձ կերպով: «ՈՎ—ՈՒՄ» խնդրի լուծումը և գյուղատնտեսության մեջ՝ հօգուտ սոցիալիզմի:

ԽՍՀՄ-ում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական վիթխարի տեղաշարժերի զուգընթաց բարձրացել է պրոլետարիատի՝ բանվոր, աշխատավոր յերիտասարդության գաղափարական քաղաքական մակարդակը, նրա կուլտուրական կենցաղային պայմանները:

ԽՍՀՄ-ի հարաճուն վերելքը տեղի յն ունեցել և ունենումե ամբողջ կապիտալիստական աշխարհում որ ավուր աճող տնտեսական ճգնաժամի, գործազրկության և հեղափոխական վերելքի պայմաններում:

Վիթխարագույն այս հաջողությունները ձեռք են բերվել կուսակցության գլխավոր գծի անդադար կիրառման հետևանքով, դասակարգային թշնամու՝ դաշնակիզմի, հակահեղափոխական տրոցկիզմի ու մյուս կողմից դասակարգային թշնամու ագենտուրայի՝ աջ թեքման, վորպես ներկա եռապի գլխավոր վտանգի «ձախ» շեղումների, մեծապետական շովինիզմի, վորպես ազգային հարցում գլխավոր վտանգի ներկա եռապում ու տեղական նացիոնալիզմի, ինչպես նաև դրանց նկատմամբ հանդես յեկող հաշտվողականության դեմ մղված պայքարում:

«ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության և համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական պայքարի այս հիմնական արդյունքը միանգամ ևս ասում է մասսաներին այն մասին, վոր միակ գիտական թեորիան յեղել է և մնում է Մարքս-Լենինյան թեորիան»

(Պոստիշև):

Ծավալուն սոցիալիստական հարձակողականը բոլոր



ֆրոնտներում՝ առաջ բերեց դասակարգային պայքարի կատաղի սրում: Դասակարգային թշնամին իր որհասական դիմադրությունն է ցույց տալիս ինչպես տնտեսական, շինարարության, նույնպես և գիտության, գրականության, գեղարվեստի և պատմության բնագավառներում: Դասակարգային թշնամին իր գաղափարախոսությունն իր ագենտուրայի միջոցով փորձում է զարտուղի, մաքսաննեղ ճանապարհներով մտցնել գիտության, գրականության, գեղարվեստի և պատմության մեջ:

Համագումարն արձանագրում է, վոր ՀԼԿՑԵՄ 7-րդ համագումարից մինչև 8-րդ համագումարն ընկած ժամանակաշրջանում ինչպես հնգամյակը 4 տարում կատարելու, նույնպես և դասակարգային թշնամու գաղափարախոսությունների՝ դաշնակցության, դաշնյերիտմիության, հակահեղափոխական տրոցկիզմի և բոլոր գույնի հակահեղափոխական գաղափարախոսությունների և կոմյերիտմիության շարքերում գտնվող դասակարգային թշնամու ագենտուրայի աջ և «ձախ» թեքման դեմ մղված պայքարում՝ կոմսոմոլը հանդես յեկավ կուսակցության առաջին և հավատարիմ ոգնականի դերում, այդ պայքարի ընթացքում գրավեց լենինյան կոմյերիտմիությանը արժանի դիրքեր, ավելի ամրացավ կոմյերիտմիությունը գաղափարապես և կազմակերպչորեն, բարձրացավ նրա գաղափարական մարտունակությունը: ՀԼԿՑԵՄ-ի ունեցած այս նվաճումները պայմանավորվում են և կոմյերիտմիության Մարքս-Լենինյան դաստիարակությամբ՝ քաղցանցի լայնացմամբ, քաղուսուցման վորակի բարձրացմամբ, աշխատանքների քաղուսուցման վորակի բարձրացմամբ,

նոր ձևերի սոցմրցման-հարվածայնության, քաղմար-
տերի, կոնֆերենցիաների, տեսական պլենումների
կազմակերպմամբ, ակտիվի տեսական մակարդակի
բարձրացման ուղղությամբ ունեցած նվաճումներով:

Համագումարը միաժամանակ նշում է կոմյերիտ-
միության Մարքս-Լենինյան դաստիարակության անբա-
վարար դրվածքը: Կոմյերիտմիության Մարքս-Լենին-
յան դաստիարակության աշխատանքները հետ են մնում
նրա տնտեսական շինարարության բնագավառներում
ունեցած մասնակցությունից և հաջողություններից
«յեթե կոմյերիտականների գործնական-կազմակերպչա-
կան շրջահայացքը զգալիորեն ընդարձակվել է, ապա
տեսական գիտելիքների ասպարեզում, նրանք դեռևս
լրջորեն հետ են մնում» (ՊՈՍՏԻՇԵՎ.):

Կոմյերիտմիության Մարքս-Լենինյան դաստիա-
րակության՝ կոմյերիտականների տեսական քաղաքա-
կան մակարդակի բարձրացման տեսակետից առանձնա-
պես հետ են մնում գյուղական կոմյերիտական կազմա-
կերպությունները: Համագումարը նշում է, վոր ՀԼԿՅԵ
մի շարք կազմակերպություններ չկատարեցին քաղ-
մինիմումը. իսկ ընդհանուր առմամբ ՀԼԿՅԵՄ-ում քաղ-
մինիմումը կիրառվեց անբավարար:

ՀԼԿՅԵՄ-ի առանձին օղակներ տեսական մակարդա-
կի ցածր լինելու հետևանքով՝ դասակարգային թշ-
նամու գաղափարախոսությունների դեմ մղված պայ-
քարում իր ժամանակին չեն կարողանում դիրքավորել
կազմակերպությանը:

Հնգամյակի 4-րդ տարվա պլանների կատարման,
անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուց-
ման 2-րդ հնգամյակի պլանների կատարումն ապահո-



վելու, դասակարգերի վերացման, դասակարգային
պայքարի սրման ներկա պայմաններում կոմյերիտմիու-
թյան առաջ սոցիալիզմի յերկիրը դնում է մի շարք
լուրջ և կարևոր խնդիրներ՝ «սոցիալիզմի շինարարու-
թյան վերաբերյալ կուսակցության դրած խնդիրների
ավելի լայն ընդգրկումը կոմյերիտմիության կողմից»
(9-րդ համագումար):

Յերտասարդության ուժերի ստեղծագործական ե-
ներգիայի բարձրաստիճան մոբիլիզացիան այս վիթխա-
րադույն խնդիրների կատարման համար, պահանջում
է ինչպես նորեկների ու վողջ կոմյերիտմիության,
նույնպես և նրա գլխավորած հարվածային բանվոր-կոլ-
տնտեսական յերիտասարդության, Մարքսիզմ-լենինիզ-
մի զենքով զինելու խնդիրը «Համ. ԼԿՅԵՄ անդամների
թեորետիկական մակարդակի բարձրացումը հանդիսա-
նում է վճռական պայմաններից մեկը՝ ամրացնելու հիմ-
նականում յերեսով դեպի տնտեսական շինարարությու-
նը ձեռք բերած շրջադարձը և բարձրացնելու միության
աշխատանքները ավելի բարձր շրջադարձը և բարձրաց-
աշխատանքները ավելի բարձր աստիճանի» (9-րդ հա-
մագումար): Ամենավճռական պայքար պետք է մղել
միության առանձին օղակներում տեղ գտած թեորիայի
թերագնահատմանը գործամոլության ու նեղ պրակ-
տիցիզմին:

Համագումարը ՀԼԿՅԵՄ-ի առաջ իր ամբողջ մեծու-
թյամբ դնում է Մարքս-Լենինյան հեղափոխական տե-
սության տիրապետելու բնագավառում իրական շրջա-
դարձ մտցնելու խնդիրը, ապահովելու կոմյերիտական
մասսաների, հատկապես նրա գյուղական հատվածի
քաղաքական դաստիարակության գործը, կոմյերիտ-

միության քանակական աճման հետ զուգընթաց ապահովելու նրա վորակական աճումը, ամրապնդելու կազմակերպչորեն և իդեապես այն հսկայական աճումը, վոր նա ունեցավ ՀԼԿՅԵՄ 7-րդ համագումարից մինչև 8-րդն ընկած ժամանակաշրջանում։ Կոմյերիտմիության Մարքս-Լենինյան դաստիարակությունը շաղկապել նրա ամենօրյա պրակտիկ աշխատանքների հետ, հարվածայնության շարժման հետ, այն հաշվով, վորպեսզի քաղուսուցումը մի հզոր լծակ հանդիսանա, սոցիալիստական շինարարության, աշխատանքի սոցիալիստական ձևերի, սոցմրցման ու հարվածայնության, արտադրության պլանավորման, գործարքի կիրառման գործում, վորպեսզի քաղուսուցումը նպաստե տնտ. հաշվարկի անցկացման, արտադրության տեխնիկային տիրապետման, կոլտնտեսությունների տնտեսապես-կազմակերպչորեն և քաղաքականապես ամրացմանը, աշխատանքային գիտակցական դիսցիպլինայի բարձրացմանը և այլն։

Կոմյերիտմիության Մարքս-Լենինյան դաստիարակությունը պետք է կազմակերպել այնպես, վորպեսզի նա զինի կոմյերիտական մասսաներին հետագայում ե՛լ ավելի վճռական պայքար ծավալելու դասակարգային թշնամու՝ դաշնակցության, դաշյերիտմիության, հակահեղափոխական տրոցկիզմի, և կուսակցության գըլխավոր գծից կատարվող բոլոր տեսակի թեքումների դեմ, և յերիտասարդությանը դաստիարակի ինտերնացիոնալիզմի վոգով։

Յուրաքանչյուր կոմյերտական, յուրաքանչյուր նորեկ պետք է սիստեմատիկաբար և տոկունությամբ ուսումնասիրի Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքը, անշեղորեն ղեկավարվելով Լենինի այն պատ



գամով, վորը տվել է նա միությանը՝ ՌԼԿՅԵՄ 3-րդ համագումարում «Կոմունիստական Յերիտասարդական Միությունն այն ժամանակ կարդարացնի իր այն կոչումը, վոր նա կոմունիստական յերիտ-սերնդի միությունն է, յերբ նա իր ուսման, դաստիարակության և կրթության յուրաքանչյուր քայլը կկապի այն պայքարի մասնակցելու հետ, վոր մղում են բոլոր աշխատավորները ընդդեմ շահագործողներին» (Համ. ԼԿՅԵՄ կանոնադրությունից)։

Այս խնդիրների իրագործումը ՀԼԿՅԵՄ-ից պահանջում է՝

1. 1931—32 ու. ամառային և 32—33 տարում քաղ. ցանցի լրիվ կերպով վերակառուցումը, նրա մոտեցումը դեպի արտադրությունը, կոլտնտեսությունը, խորհտնտեսությունը, բրիգադը, ցեխը, ագրեգատը, քաղ. ուսուցման անընդհատ տարվա անցնելու բոլոր պայմանների ստեղծումը, և կոմյերիտմիության գլխովին ընդգրկումը քաղ. ցանցում։

2. Քաղ. ուսուցման ցանցի լայն կերպով ծավալումը, նրա խորացումը, հատկապես գյուղական վայրերում և ազգային փոքրամասնությունների շրջանում քաղ. մինիմումի, քաղ. արտադրական, կոլխոզ-քաղ. արտադրական, նորեկների դպրոցների թեմատիկ ընթացիկ մոմենտ ուսումնասիրող խմբակների ցանցի ծավալումը։ Միաժամանակ կոմյերիտմիության քաղ. ուսուցման ցանցում հիմնական ձևերից մեկը ընդունել, առարկայական և թեմատիկ, կուս. պատմության և կոմյերիտմիության պատմությունը ուսումնասիրող խմբակները, վորովհետև «չկա ավելի լավ զենք, մեր յերիտասարդության մարքսիզմի, լենինիզմի ուսմուն-

ճով դաստիարակելու համար, ճան մեր կուսակցության պատմությունը» (ԿԱԳԱՆՈՎԻՉ)։

*Վճռականապես բարելավել կոմյերիտմիության քաղ. ուսուցման որակը, քանակական ընդգրկման հետ ապահովել նրա որակական բարձր ցուցանիշները. քաղ. ուսուցման կոմյերիտական հարվածայինը պետք է լինի հարվածային նաև արդֆինպլանների կատարման ու գերակատարման, գյուղում անցկացվող տնտեսական և քաղաքական կամպանիաներում արտադրության որակի համար մղվող պայքարում, ինքնարժեքի իջեցման, բերքատվության բարձրացման, նորագույն տեխնիկայի ուսումնասիրման և միութենական աշխատանքների բոլոր ասպարեզներում։*

3. *Սիստեմատիկ և խորացրած աշխատանք ծավալել պրոպագանդիստների, ղեկավարող կադրերի պատրաստման և վերապատրաստման համար։ Համագումարը գտնում է անհրաժեշտ* 1932—33 *քաղ. ուս. տարվա համար մինչև ուս. տարվա սկիզբը կարճատև դասընթացների միջոցով պատրաստել Երևանում* 150, *Լենինականում* 120, *բամբակագործական ռայոններում* 40*-ական և մնացած ռայոններում* 30*-ական քաղ. խմբակավարներ։ Հանձնարարել Կենտ. Կոմիտեին նյութական և այլ անհրաժեշտ հարմարություններով ապահովել դասընթացների ժամանակին բացումը։*

*Համագումարը ինչպես Կենտրոնական Կոմիտեից, նույնպես և տեղական կազմակերպություններից պահանջում է ծավալել համապատասխան աշխատանք՝ բանվոր-պրոպագանդիստների առաջ քաշման, նրանց վերապատրաստման, պրոպագանդիստների կուսակցականության յեվ գաղափարապես կայուն կադրեր ձեռք բերելու ուղղությամբ։*



4. *Համագումարը միանգամայն անբավարար համարելով կոմյերիտական քաղ. ցանցի համար հրատարակված դասագրքերը և՛ քանակական և՛ որակական ցուցանիշների տեսակետից, հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեին վճռական ու գործնական միջոցառումներով ապահովել կոմյերիտական քաղ. ցանցը իդեոլոգիապես կայուն, սոցիալիստական շինարարության ներկա խնդիրներն արտացոլող և զանազան տիպերի համար համապատասխան դասագրքերով ու ժա[illegible] գրականությամբ։*

5. *Արձանագրելով, որ աշխատանքի նոր սոցիալիստական ձևերը՝ սոցմրցումն ու հարվածայնությունը դեռևս անհրաժեշտ չափով չի ծավալված քաղ. ուսուցման բնագավառում, Համագումարը խնդիր է դնում բոլոր կազմակերպությունների առաջ, սոցմրցմանն ու հարվածայնության ծավալման, փորձի տեղափոխման, քաղուսուցման հարվածայինների պարգևատրման ու խրախուսման ուղղությամբ, ինչպես և քաղուսուցման նոր ձևերի՝ քաղ. մարտերի, քաղ. կոնֆերենցիաների, քաղ. հաշվետվությունների, տեսական ստուգումների կազմակերպման, այդ աշխատանքների աշխուժացման ուղղությամբ ծավալել իսկական աշխատանք։*

6. *Համագումարն արձանագրում է, որ կոմյերիտական մամուլը՝* «Ավանգարդ»*-ը և* «Յերիտ. Բոլշևիկ»*-ն առանձնապես վերջին շրջանում խոշոր հաջողություններ ունեն արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրական շինարարության, պլանների կատարման ու գերակատարման համար մղված պայքարում՝ կոմյերիտական մասսաներին կազմակերպելու*

ուղղությամբ: Բարձրացել է կոմյերիտական մամուլի վորակը: Կանոնավորվել է «Յերիտ Բոլշևիկի»-ի հրատարակությունը: Ճիշտ է «Յերիտ Բոլշևիկ»-ի վերակառուցումը կոմյերիտական միջին ակտիվի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Սակայն համագումարը միաժամանակ նշում է, վոր «Յերիտ-Բոլշևիկ»-ը իր վորակով և ընդհանրապես կոմյերիտական մամուլը Մարքս-Լենինյան դաստիարակության ուղղությամբ դեռ չի ապահովում կուսակցության և կոմյերիտմիության առաջ դրված հիմնական խնդիրների կենսագործումը:

Համագումարն անհրաժեշտ է համարում մամուլի վորակի բարձրացման, նրան կարող կադրերով ապահովելու, հրատարակչական գործի կանոնավորման, «Ավանգարդ»-ի ծավալի մեծացման և տիրաժի բարձրացման ու տարածման ուղղությամբ ձեռք առնելու անհրաժեշտ միջոցներ: Համագումարը միանգամայն ժամանակին և կարևոր է համարում ամսագիր ժուռնալի հրատարակումը, հատկապես քաղ. ցանցի կոնկրետ խնդիրների, փորձի փոխանակման, քաղ. ցանցի կազմակերպման կոնկրետ խնդիրները լուսաբանելու համար:

Համագումարը նշում է՝ կոմյերտական մի շարք կազմակերպությունների (Վեդիբասար, Մեղրի, Ղարաքիլիսա, Բասարգեչար, Ապարան) բյուրոկրատիկ, ձևական մոտեցումը քաղ. ցանցի կոմպլեկտավորման, առանձին տիպի խմբակների կազմակերպման գործում, վոր արտահայտվել է կաբինետային կոմպլեկտավորում կատարելու քաղ. մինիմումի և նորեկների խմբակներ չկազմակերպելու ու այլ խնդիրների մեջ: Այստեղից համագումարը խնդիր է դնում կոմյերիտ. կազմակերպությունների առաջ հատուկ ուշադրություն դարձնելու քաղ. ցանցի կոմպլեկտավորման, առանձին տիպի խմբակների, մասսայականացման, կազմակերպման գործի վրա, այն հաշվով, վորպեսզի «անցկացնել դիֆերենցիալ քաղ. մինիմում կոմյերիտական զանազան խմբակների համար, նրանց քաղ. պատրաստականության համաձայն: Քաղ. գիտելիքների վրա շրջան կոմյերիտականների համար պարտադիր է, ձևի (խմբակի) ընտրությունը կամավոր է» (Համ. ԼԿՅԵՄ ԿԿ):

Կոմյերիտական քաղ. ցանցի կոմպլեկտավորումն ամենուրեք պետք է անցկացնել կոմյերիտմիության ստորին ողակներում, կոմյերիտական և աշխատավոր արտամիութենական յերիտասարդության լայն մասսայի մասնակցությամբ, բազմակողմանի հաշվառման հիման վրա և յուրաքանչյուր տիպի (խմբակի) բովանդակությունը պետք է մասսայականացնել այն հաշվով, վոր այն դառնա յուրաքանչյուր կոմյերիտականի սեփականությունը, և դրանով իսկ ամբողջովին կանխվի կոմպլեկտավորման գործում անցյալներում կատարած սխալները:

Համագումարը կոմյերիտական քաղ. ցանցի աշխատանքների հաշվառման և ինֆորմացիա գործին տալով կարևորագույն նշանակություն ընդգծում է, վոր այդ աշխատանքների վորոշ քաղաքական նշանակությունը դեռևս չեն ըմբռնել մի շարք շրջանային կազմակերպություններ, վորոնք ուղղակի թերագնահատել են այդ գործը, վորի հետևանքով մի շարք կազմակերպություններում բացակայում է քաղ. հաշվառման և ինֆորմացիայի աշխատանքները: (Մեղրի, Ստեփանավան, Աշ-

տարակ, Ագրարա, Նորարան): Հաշվառման և ինֆորմացիայի աշխատանքների նկատմամբ ցուցաբերվող այդ անպատասխանատվությունն ամբողջովին վերացնելու համար համագումարը պահանջում է բոլոր կոմյերիտական կազմակերպություններից կարճ ժամանակամիջոցում վճռական բեկում մտցնել և կարգավորել քաղ. ուսուցման աշխատանքների հաշվառման և ինֆորմացիայի գործում, այն հաշվով, որ սկսած կոմյերիտական բջիջներից, վերջացրած շրջանային կոմիտեյով՝ ապահովվի ճիշտ ժամանակին ու սիստեմատիկ վորակավոր հաշվառման և ինֆորմացիայի ուղարկումը ղեկավար օրգաններին:

Համագումարը նշում է, որ կոմյերիտմիության Մարքս-Լենինյան դաստիարակության աշխատանքներն անհնար է բարձր աստիճանի վրա դնել, առանց կոնկրետ, օպերատիվ, ամենօրյա ղեկավարություն սահմանելու սկսած Կենտկոմից, վերջացրած բջիջներով: Համագումարն ընդգծում է, որ ղեկավարության մեջ դեռևս, տիրում է ընդհանուր վոչ կոնկրետ վոչ օպերատիվ աշխատանքի ձևեր: Համագումարը խնդիր է դնում ինչպես Կենտկոմի, նույնպես և տեղական կազմակերպությունների առաջ՝ ձեռնարկելու գործնական միջոցառումներ՝ քաղ. ցանցի աշխատանքների նկատմամբ ապահովելու համար, չերտավորյալ, ամենօրյա, կոնկրետ և օպերատիվ ղեկավարություն, կազմակերպելով անվարձ պրոպագանդիստների խմբակներ, քաղ. ուսուցման բջիջային կազմակերպիչներ: Սիստեմատիկաբար հրավիրել առանձին տիպերի, խմբակների ու խմբավարների դիֆերենցիալ խորհրդակցություններ,



կուս-կոնֆերենցաներ, լսել պարբերաբար քաղ. խմբավարների զեկուցումներ, գործի լծել և աշխուժացնել մեթոդական բյուրոների աշխատանքները, նրանցում ապահովելով կուսակցական և կոմյերիտական հանրակրթական և քաղ. կրթական բարձր պատրաստականություն ունեցող կայուն ու կոփված ընկերներ նրանց աշխատանքը դնելով ծրագրային և սիստեմատիկ հունի մեջ:

Ցելնելով վերոհիշյալից համագումարը քաղուսուցման վիժեցումը վորակելու յե տվյալ ղեկավարության անընդունակությունը՝ մեր աշխատանքներ գլխավոր ողակի շուրջն աշխատանքները կազմակերպելու գործում:

Համագումարը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեյին՝ համապատասխան մարմինների հետ միասին ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները կոմյերիտական քաղ. ցանցն ապահովելու համար կադրերով և անհրաժեշտ նյութական միջոցներով: Համագումարը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեյին՝ վերջնականապես լուծում տալու շրջանային և քաղաքային կոմիտեներում վարձու մեկական պրոպագանդիստներ ունենալու խնդիրը:

Համագումարը նշում է, որ պիոներական կազմակերպության, կոմյերիտմիության այդ ռեզերվի կոմունիստական դաստիարակության գործի դրվածքը, նրա ձևերն ու մեթոդները չի ապահովվում պիոներական կազմակերպությունը՝ յերեխաների աճող պահանջների և սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների մասնակցությունը ապահովելու գործում:

Համագումարը նշում է, կոմյերիտական կազմա-

կերպությունների միանգամայն անբավարար ղեկավա-
րությունն առանձնապես պիոներական կազմակերպու-
թյան՝ յերեխաների կոմունիստական դաստիարակու-
թյան նկատմամբ: Պիոներական հատկապես ներքին ո-
ղակների, կոլեկտիվների աշխատանքների բովանդակու-
թյունը դեռևս հետ է մնում է աճող սերնդի պահանջնե-
րից ու սոցիալիստական շինարարության բուռն տեմպե-
րից:

Մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակու-
թյան, նրանց աշխատանքների նյութական ոժանդակու-
թյան և այլ բնագավառներում Լուսժողկոմատի, պրոֆ-
միությունները ու Սոցապ. ժողկոմատի աշխատանք-
ները դեռևս շատ հեռու յեն բավարար լինելուց: Համա-
գումարը պահանջում է Լուսժողկոմատից, պրոֆմիու-
թյուններից և Սոցապժողկոմատից առաջիկայում վճռ-
ական բեկում մտցնել այդ բնագավառում իրենց աշ-
խատանքների մեջ:

Համագումարը կոմյերիտական ամբողջ կազմակեր-
պությանը, պիոներական ակտիվի առաջ վճռականապես
խնդիր է դնում բեկում ստեղծելու յերեխաների կոմու-
նիստական դաստիարակության գործում:

Համագումարը խնդիր է դնում Կենտկոմի, Պիոներ
Կենտ. բյուրոյի առաջ՝ Լուսժողկոմատի, պրոֆմիու-
թյունների և համապատասխան կազմակերպություննե-
րի հետ միասին ձեռնարկելու ՀԿ (բ) Կ ԿԿ-ի ապրիլի
21-ի վորոշման մասսայականացմանն ու կատարմանը:
Հատուկ միջոցառումներ մշակել դպրոցաշինարարու-
թյան, ակումբների, խրճիթ-ընթերցարանների, պիոնե-
րական տների, պիոներական կինոների, պատանեկական
թատրոնների կազմակերպման ցանցի լայնացման ուղ-
ղությամբ:



Վերակառուցել պիոներական կազմակերպչության
աշխատանքը արդյունաբերության, գյուղատնտեսու-
թյան, դպրոցի մեջ, պիոներկազմակերպությունը ապա-
հովել կոմյերիտական կարող կադրերով այնպես, վոր-
պեսզի պիոներական կազմակերպությունը հաղորդակից
անենք միջազգային հեղափոխական շարժման խնդիրնե-
րին և յերեխաների մեջ դաստիարակենք դասակարգա-
յին ինտերնացիոնալ համերաշխության գիտակցու-
թյունը»:

Համագումարը նշում է, վոր կուսակցության, ներ-
քին ողակների սիստեմատիկ, առօրյա ոպերատիվ ղեկա-
վարությունը դեռևս անբավարար է կոմյերիտմիու-
թյան Մարքս — Լենինյան դաստիարակության վրա:
Մի շարք կուսակցական կազմակերպություններ լուրջ
կերպով չեն զբաղվում կոմյերիտմիության Մարքս-Լե-
նինյան դաստիարակության խնդիրներով: «Մինչդե-
կոմյերիտականների Մարքս-Լենինյան դաստիարակու-
թյան գործում հույս դնել միայն կոմյերիտմիության
ուժերի վրա, վոչ մի դեպքում չի կարելի. այս պատճա-
ռով անհրաժեշտ է ուժեղացնել կուս. կազմակերպու-
թյունների ուշադրությունը դեպի Մարքս-Լենինյան
դաստիարակության դրվածքը կոմյերիտմիության մեջ,
ոգնելու նրան թե պրոպագանդիստական ուժերով, թե
նյութական միջոցներով, թե առօրյա ղեկավարու-
(ՊՈՍՏԻՇԵՎ)
թյամբ»:

Համագումարը կուսակցական կազմակերպություն-
ներից վճռականապես պահանջում է ուժեղացնելու ղե-
կավարությունը կոմյերիտմիության Մարքս-Լենինյան
դաստիարակության նկատմամբ, հատկապես խնդիր է
դնում է 32–33 ուս. տարում 200 կոմունիստ կոմյերիտա

կան պրոպագանդիստների մոբիլիզացիա կատարել՝ կոմյերիտական քաղուսուցման ցանցում աշխատելու համար, բարելավել կոմյերիտական քաղ. ցանցը անհրաժեշտ նյութական միջոցներով, մեթոդական ցուցմունքներով, ծրագրերով ու գրականությամբ:

Համագումարն արձանագրում է, վոր կոմյերիտական ղեկավարող ակտիվի տեսական մակարդակը հետ է մնում սոցիալիստական շինարարության և կոմյերիտական մասսաների դաստիարակության պահանջներից ու խնդիրներից: Կոմյերիտական ակտիվը հանրապետականից մինչև բջիջ լուրջ կերպով չի զբաղվում ինքնազարգացման գործով, չի ստեղծվել անհրաժեշտ պայմաններ ակտիվի ինքնազարգացման, նրա տեսական մակարդակի բարձրացման համար: Ակտիվի վորոշ ողակներում տեսական մակարդակի ցածր լինելու հետևանքով դժվար է ըմբռնում սոցիալիստական շինարարության դասակարգերի փոխհարաբերության ներկա խնդիրները, մեր հեռանկարները: Կոմյերիտական միլիոնավոր մասսաների կոմունիստական դաստիարակությունը կոմյերիտական ակտիվից պահանջում է տիրապետել Մարքս-Լենինյան թեորիային. «այդ պատճառով լենինիզմի ուսումնասիրությունը, լենինյան ուսումն ամենաանհրաժեշտ պայմանն է, վորպեսզի այժմյան կոմյերիտական ակտիվը վերածվի իսկական լենինյան ակտիվի, վորն ընդունակ լինի դաստիարակելու բազմամիլիոն կոմյերիտական յերիտասարդությունը պրոլետարիատի դիկտատուրայի և կոմունիզմի վոգով» (ՍՏԱԼԻՆ): Համագումարը կտրականապես պահանջում է կոմյերիտական ակտիվից տեսական ուսուցման գործի բնագավառում իրական բեկում, կարճ ժամանակվա ընթացքում կիրառելու



համ. ԼԿՅԸՄ Կենտկոմի 3-րդ պլենումի վորոշումները՝ ակտիվի վերապատրաստման մասին: Վճռական միջոցներ ձեռք առնել ակտիվի վորոշ մասը ծանրաբեռնվածությունից ազատելու, անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ինքնազարգացման, հեռակայության, կարճատև դասընթացների համար:

Համագումարը նշելով առանձնապես Մարքս-Լենինյան դաստիարակության՝ քաղ. ուսուցման աշխատանքների միանգամայն անբավարար դրվածքը ազգային փոքրամասնությունների մեջ, հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեյին այս ամառվա ընթացքում և ձմեռային քաղցանցի կազմակերպման ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների մեջ խմբակների կազմակերպման, քաղցանցի ընդարձակման, քաղխմբավարների պատրաստման, նրանց գրականությունով ապահովելու գործին:

Նշելով պիոներական ակտիվի թեորետական, մանկավարժական պատրաստության հետ մնալը պատանեկության աճող պահանջներից և նրա կոմունիստական դաստիարակության խնդիրներից, Համագումարն առանձին խնդիր է դնում բոլոր կազմակերպությունների, ինչպես և Կենտրոնական Կոմիտեյի ու Լուսժողկոմատի առաջ, կարճատև դասընթացների, հեռակա ուսուցման, պիոներական ակտիվի ինքնապատրաստման գործը սիստեմատիզացիայի յենթարկելու միջոցով՝ իր կոչման բարձրության վրա դնել պիոներական ակտիվի տեսական պատրաստականության գործը:

Համագումարն անհրաժեշտ է համարում Անդըրկովկասի կոմ. կուսակցության, կոմյերիտմիության, յեղբայրական հանրապետությունների աշխատանքի և պայքարի ամենօրյա ուսումնասիրության գործը:

2334

Համագումարը նշում է, որ դասակարգային պայքարի առաջիկա ավելի սրման պայմաններում՝ կոմյերիտական կազմակերպությունը և աշխատավոր յերիտասարդության իդեոլոգիական պայքարի խնդիրները պետք է տեղափոխեն ավելի բարձր աստիճանի, հանուն լենինյան գծի անաղարտության, հանուն անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցման։

Կեցցե՛ լենինիզմը։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Սրբագրեցին՝ Ս. Տեր-Պողոսյան, Հ. Հակոբյան

Հանձն. արտ. 10/VI 1932 թ.

Ստ. տպագ. 23/VII թ

Գլավլիտ 7639 (բ) Հրատ. 5 Պատվեր 2326 Տիրաժ 3000

Պետհրատի տպարան, Երևան

ՀՀ Ազգային գրադարան
NL0189176